

Ստեղծագործականություն

Գևորգ Տեր-Գաբրիելյան

«Մարդամեջ 2018» սոցիալ-նորարարության հավաք

Հունիսի 28, 2018 թ.

Հրատարակված՝ սեպտեմբերի 3, 2018

Պատրաստված՝ [Եվրասիա համագործակցություն հիմնադրամի](#) կողմից

Բանալի բառեր. Ինովացիա, նորարարություն, ծրագիր, հիերարխիա, պատասխանատվություն, հասկացություններ, թեզաուրուս, համադրում, կոնտեքստ, հայտնագործություն, մտածողություն, ստեղծագործականություն, էրուդիցիա, ռեֆլեքսիա

0:17 **Գևորգ Տեր-Գաբրիելյան (ԳՏԳ)** – Որպես առաջաբանի մաս՝ ես ուզում եմ մի քիչ պատմել, թե ծրագրերը ինչի՞ մասին են, որովհետև ելույթ ունեցողները քիչ նշեցին: Բայց մեր կազմակերպությունը, որը, իմիջայլոց, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ է (մենք տասը տարի աշխատում ենք, որ եղպես մեզ անվանեն, ոչ թե Եվրասիա հիմնադրամ), բախտ է ունեցել, ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորման շնորհիվ՝ ընդգրկվել երկու կարևորագույն ծրագրերի մեջ. մեկը զբաղվում է մեդիայով, մյուսը զբաղվում է ինքնակառավարմամբ: Ի՞նչն է հետաքրքիր էր ծրագրերի մասին. որ իրանք երկարատև էին՝ հենց սկզբից իրանք պլանավորվել էին հնգամյա ծրագրերով: Պիտի ասեմ, որ մենք նաև բախտ ունենք ևս մի ծրագիր անել, որը նույնպես շատ ռելևանտ է էս մեր միջոցառման համար. դա կոչվում է [ՀԿ Դեպո](#) և նվիրված է քաղաքացիական հասարակական կազմակերպությունների զարգացմանը:

Եվ ահա, լինելով այդ երեք ծրագրերի խաչմերուկում, ունենալով էսպիսի հոյակապ գործընկերներ, ունենալով տևական ապագայի հնարավորություն՝ լավ պլանավորելու, տարբեր բաներ անելու... Որը շատ կարևոր է զարգացման համար, որովհետև երբ որ կարճատև է պլանավորումը՝ չես կարողանում խոշոր արդյունքների հասնել... Ունենալով էդ տևական հնարավորությունը՝ մենք էդտեղ ներդրել ենք մի շարք գործողություններ, որոնք վերաբերում են Հայաստանի որոշ շրջաններում որքան կարելի է շատ ընդգրկել, և ոչ միայն երիտասարդներին, բայց իհարկե նախ և առաջ երիտասարդներին, զարգացման այս պարադիգմի մեջ՝ Հայաստանի զարգացման պարադիգմի մեջ:

Եվ էս «Մարդամեջ»-ը դրա մի դեպքերից մեկն է: Բացի դրանից՝ Վահանի [ՀաՄաՏեղ](#) ծրագրի՝ Վահանի ղեկավարությամբ¹ ՀաՄաՏեղ ծրագրի մեջ՝ մենք և [Ինֆոսոներին](#) աջակից մարդիկ գիտենք դրա մասին, անում ենք այնպես, որպեսզի հասարակությունը իրենց տեղանքներում ավելի լավ մասնակցի ինքնակառավարմանը: Որովհետև խոսքը ամեն դեպքում գնում է ինքնակառավարման մասին: Դա ոչ թե ինչ-որ մեկի, էսպես, հիերարխիկ՝ վերևից ներքև իջնող համակարգն է, որը մեզ

¹ Համայնքների ֆինանսիստների միավորում. <http://cfoa.am/>

մոտ, ավաղ, ունի եղպիսի տարրեր, այլ դա ներքևից՝ հենց մարդկանց կողմից ձևավորված ինքնակառավարման համակարգն է. պիտի լինի: Եվ ես միշտ օրինակ եմ բերում, շատ, էսպես, բան, ոչ գիտականորեն, իհարկե, բայց ես ասում եմ. պատկերացրեք Ամերիկայի Միացյալ Նահանգները մինչև իրենք դարձան Միացյալ Նահանգներ: Գալիս էին գաղթական ժողովուրդ, մի տեղ հարմարվում էին, և իրենք չունեին ո՛չ մի կառավարում, ո՛չ մի ֆեդերալ ինչ-որ համակարգեր, բան: Իրենք իրենց մեջից ընտրում էին մարդկանց, ովքեր իրենց օգնելու էին, որ իրենք տակից դուրս գային՝ պայքարեն թշնամիների դեմ, զարգանան, և այլն: Էդ «շերիֆ» կոչվածը, և այլն: Ներքևից է ձևավորվում դա:

Մեզ մոտ, ավաղ, Խորհրդային Միության, թե որ պատճառներով՝ էդ ժառանգության պատճառներով, ամեն ինչ վերևից է ձևավորվում: Վերևից էլ գալիս են, ասում են եկեք հիմա ինքնակառավարվեք: Որը չի ստացվում, որովհետև երբ որ վերևից են ասում՝ արդեն և՛ իրենց մտքին չկա իրականը, և՛ դուք էլ՝ մարդը արդեն մի քիչ չի կարողանում, էլի, որովհետև պիտի ապստամբի, եթե ուզում է մնալ:

Ուրեմն մենք անում ենք դա, որ էդ անջրպետը լցնենք, պարոն Մովսիսյանի [կազմակերպության](#) և մի շարք այլ գործընկերների հետ միասին, որպեսզի ինքնակառավարումը դառնա ինքնակառավարում իրականում:

Մեդիայի ծրագրով² էլ ինչ ասես չենք անում՝ բնականաբար զարգացնելով գոյություն ունեցող իրական մեդիաները, բայց նաև՝ զարգացնելով քաղաքացիական ժուռնալիստիկան՝ զարգացնելով մեր քաղաքացիների, մեր հասարակության կարողությունները՝ դառնալ մեդիա: Եվ մեր լոգունգներից մեկը, որը շատ հաճախ օգտագործվում է, կոչվում է «Ես եմ մեդիան», որովհետև էսօրվա կյանքում մեզանից ամեն մեկը մեդիա է: Հիմա մնում է հասկանալ՝ ինչի՞՞ համար դա օգտագործել: Դա օգտագործում ես ինչի՞՞ համար. որ քո հավեսի բանը գրես քո բլոգում կամ ֆեյսբուքում, որ ուշադրություն գրավես, վիդեո անես, թե կլիպ, թե ֆոտո... Բայց և, եթե կա հանրային խնդիր... Ասենք, նայեք, օրինակի համար, [Մարտունիի Ինֆոտան բլոգը](#). գրեթե ամեն օր հանրային խնդիր է բարձրացվում էնտեղ, և ուշադրություն է գրավում, և համակարգ է ստեղծվում. մարդկանց կազմակերպում են, որպեսզի նրանք դա հասցեագրեն: Ինչպես և մեր բոլոր մյուս ինֆոտները, և ինչպես շատ ու շատ այլ քաղաքացիներ:

Որովհետև եթե դու ուշադրություն չես գրավում էսինչ պրոբլեմին և չես ստեղծում հնարավորություն, որ ուրիշները դրան մասնակցեն՝ չի ստացվում:

Եվ էդ ամեն ինչը տեղի էր ունենում նաև մինչև հեղափոխությունը:

Բայց մինչև հեղափոխությունը մի ձևի... Եսիմ, անձամբ իմ մասին եմ ասում... Իմ մեջ մի ձևի հուսահատություն կար: Որովհետև մինչև հեղափոխությունը ես մտածում էի. Էս լավ ժողովրդով, Էս լավ ծրագրերով՝ մենք կունենանք փոքր արդյունք, մենք կունենանք կղզակներ, մենք կունենանք միայն էնպես, որ կլինի մի փոքրամասնություն Հայաստանում, որը ճիշտ ձևի է ապրում, զարգանում, որի արժեքները ճիշտ են: Իսկ ամբողջ Հայաստանը, ավաղ, գնում է այլ ուղղությամբ, գնում է դեպի սխալ զարգացում, դեպի անհաջողություններ:

² Մեդիան քաղաքացիների տեղեկացված մասնակցության համար. <http://am.epfarmenia.am/am/current-programs/media-for-civic-engagement/>

Հեղափոխությունը այդ ամենը փոխեց ինձ համար: Շնորհիվ ձեզ, ձեր սերնդակիցների, որովհետև դա հեղափոխություն է, որը իմ սերունդը չի արել, այլ արել են քառասուն տարեկան և ավելի երիտասարդները: Եվ դա պատմականորեն փոխեց իմ զգացումը դեպի էս երկիրը, վերականգնեց իմ հավատը, ինձ դարձրեց շատ ավելի համեստ:

Որովհետև ես հիմա գիտեմ, որ էդ արդեն բառեր չեն, ես գիտեմ, որ իշխանությունը ձեր սերունդների ձեռքում է, դու՛ք եք որոշում կայացնողները:

... Ցույց տվեց ինձ սահմանափակումները, որովհետև իմ սերունդը չկարողացավ, ու երբեք չէր կարողանա, էդպիսի ոչ բռնի գործողություն կատարել, և էդպիսի ստեղծագործական: Եվ, իհարկե, պատասխանատվությունը կիսել է թույլ տալիս ինձ և մեր բոլոր գործընկերներին ձեզ հետ արդեն շատ ավելի լուրջ իմաստով, քան պարզապես հռետորաբանական խոսքը կլինի:

Էն, ինչ որ ես հիմա ասում եմ, սա արդեն լուրջ հարաբերությունների մասին է խոսքը. պատասխանատվությունը ձեր վրա շնորհիվ եղած հեղափոխության միանգամից շատ ուժեղացավ, մեծացավ, որովհետև դա իրո՛ք արդեն ձեր երկիրն է դառնում, արդեն իրո՛ք ձեզանից է կախված:

Երևի էստեղ ես առաջաբանային մասը ես ավարտին հասցնեմ և հարցնեմ. արդյոք համաձայն եք իմ ասածների հետ, թե՞ ոչ:

8:30 Դահլիճ – Այո՛:

ԳՏԳ – Հա, ես գիտեմ, որ դու համաձայն ես: Դուք հասկանո՞ւմ եք, համաձայն եք, կիսո՞ւմ եք իմ էն զգացողությունը, որ կատարվեց մի բան, որը շատ անսպասելի ու շատ պատմականորեն նշանակալի է:

8:55 Դահլիճ 1 – Այո:

Դահլիճ 2 – Արմատական փոփոխություններ կմտցնի Հայաստանում:

ԳՏԳ – Հիմա, տեսե՞ք, ի՞նչն է շատ հետաքրքիր. որ դա կատարվեց: Ու մենք պիտի գնահատենք էդ եղածը՝ ապրիլի քսաներեքից մինչև մայիսի ութը ներառյալ եղած հատվածը, երբ տեղի ունեցավ ժողովրդի կամքին համաձայն իշխանափոխություն: Բայց դա գնահատելուց դենը մենք հիմա գտնվում ենք արդեն՝ դա նույնպես ասվեց, անվերջ հեղափոխության պրոցեսի մեջ, երկարատև փոփոխությունների պրոցեսի մեջ: Անկախ նրանից, թե հիմա ո՞նց կգնա՝ նա (եղածը)՝ գնահատելի է:

Բայց շատ մեծ դժվարություններ կան: Եվ կան հավանականություններ, որ կարող է էնպես չգնա, ինչպես պետք է: Եվ էստեղ էլ մեր բոլորի, և ձե՛ր, պատասխանատվությունը շատ մեծ է:

Որովհետև էդ հեղափոխությունը մեզ ներարկեց մի քանի արժեքներ, որոնցից կարելի է չքաշվել:

Մեծերի՝ անձամբ իմ մասին եմ ասում: Օրինակ՝ ես առաջ ավելի զուսպ էի խոսում, որովհետև ես վախենում էի. . . Որովհետև ես վախենում էի, որ իմ խոսքի պատճառով՝ իմ մտիկները կամ իմ շրջապատի մարդիկ կարող են ես կամ էն ձևի ենթարկվել ինչ-որ հետապնդումների կամ ինչ-որ բանի: Ես չէի ասում ամեն ինչ՝ ինչ մտածում եմ կաշառակերների, կոռուպցիոներների մասին: Չէի ասում, թե ինչ աստիճան եմ ես. . . Ի՛նչ աստիճան եմ ես տխուր և հուսախաբ, որովհետև թե ի՛նչ աստիճան խորքի է էդ կոռուպցիան հասել:

Որովհետև ո՛չ միայն վախենում էի, ո՛չ միայն որովհետև մտածում էի. եթե ինչ-որ մեկի անունը տաս, մանավանդ մականունավորներից՝ կգան հետևիցդ, - այլև՝ հու՛յսը չունեի, որ էդ ասելուց ինչ-որ բան կփոխվի: Եվ նաև՝ չէի ուզում մարդկանց հուսահատեցնել ինչ-որ չափով:

Հիմա՝ այդ անվախության ժամանակն է հիմա: Որովհետև ընդհանուր դիսկուրսը՝ համայնական հասարակական դիսկուրսը, ճշմարտության կողմն է: Հասարակական դիսկուրսը այլևս չի մատնանշելու ինչ-որ մեկին ու ասի. այ, դու սուտ ու սխալ ես ասում, երբ քննադատում ես, կամ մերկացնում ես հանցագործությունը: Կարող է ասեն ինչ-որ խմբեր... Բայց հասարակական դիսկուրսը այժմ դարձել է ճշմարտությանը համապատասխան: Եվ դա շատ կարևոր բան է: Համաձայն յն եք: Չգո՞ւմ եք էդ բանը: Պիտի...

12:04 **Դահլիճ** – Միանշանակ: Այո:

ԳՏԳ – Պիտի ասեմ, որ, իհարկե, ձեզ համար՝ շրջաններում, դա կարող է եղբան լավ չերևալ: Եվ ձեզ համար՝ շրջաններում, դա կարող է լինել շատ ավելի բարդ, քան թե ամբողջ Հայաստանի սահմաններում: Որովհետև երբ մենք նայում ենք՝ ի՞նչ է կատարվում Երևանում, ի՞նչ է կատարվում, էսպես ասած, քաղաքական և գործարար շրջանակների ամենաբարձր մակարդակի վրա՝ դա առանձին դեպքեր են: Իսկ շրջաններում կյանքը շարունակվում է ինչպես որ կա:

Նենց որ ձեզանից էլ, հատկապես, և՛ խիզախություն է պահանջվում, և՛ միասնականության զգացում, և՛ հավատ, որ էդ հասարակական դիսկուրսը փոխվել է, ու իր վրա կարելի է հենվել: Որպեսզի ձեզ մոտ էլ էդ փոփոխությունները դառնան և՛ երևացող, և՛ զգալի, և՛ շարունակական, և՛ դեպի լավը:

Էնպես որ մենք մտել ենք ինչ-որ մի շատ բարդ, շատ ակտիվ շրջան: Եվ մենք բոլորս պիտի, իրար օգնելով անընդհատ, և օգնելով նրանց, ովքեր եկել են իշխանության՝ անընդհատ առաջ տանենք մաքրումը և զարգացումը արդեն:

Բայց հիմա, գիտեք ինչ, իմ համար շատ ուրիշ մթնոլորտ է, որովհետև, ասենք, վեց ամիս առաջ ես մտածում էի. «Դե գիտությունը Հայաստանում ինչքան էլ զարգացնեն՝ առանձնապես չի զարգանալու: Ֆիզիկոսները, ավադ, հիմա պետք ունեն շատ խոշոր տեխնոլոգիական հարմարանքների: Դա համաշխարհային գիտություն է: Ուրեմն եթե կա շնորհքով, տաղանդավոր ֆիզիկոս՝ ինքը կգնա արտասահման, որ աշխատի»:

Հիմա ես կարծիքս փոխել եմ. հիմա իմ հավատը վերականգնվել է և՛ էս հասարակության, և՛ էս պետության կարողությունների մեջ: Որ՝ իմաստ ունի էստե՛ղ բուժել ֆիզիկոսներ և էստե՛ղ զարգացնել էդ տեխնոլոգիաները: Ա՛յ, է՛դ փոփոխության մասին է խոսքը, որ հավատն է փոխվում մարդու մոտ:

Եվ առաջ ես մտածում էի. «Եթե ես աշխատանք չունենամ՝ ի՞նչ պիտի անեմ. բիզնես անել հնարավոր չէ, ամեն ինչ փակ է, հավես չունեմ մտնել էդ հարաբերությունների մեջ ինչ-որ մաքսատանը, կաշառք, բան՝ ես երբեք սովոր չեմ եղել տենց բաների՝ չեմ կարողանալու դա անել: Բա ի՞նչ անեմ»:

Հիմա ես մտածում եմ. «Վա՛յ, ինչ լավ ա, կարելի է մի հատ փոքրիկ կաֆե բացել ու քո համար գեղեցիկ... Մի հատ ինչ-որ արվեստի կաֆե ստեղծել՝ ու եղպես փող աշխատել»: Հավատ է:

Իրականում շատ քիչ բան է փոխվել, բայց հավատը փոխվել է դեպի հնարավորությունները:

Եվ դուք ունենալու եք հսկայական հնարավորություններ:

Առաջ ես մտածում էի. «Հա, կա էդ «Երևան», թե ո՞նց է կոչվում՝ էդ կրթական «Լույս» հիմնադրամը, կամ ով: Տեսնես ո՞ւմ են իրանք ուղարկում: Երևի՝ մի երկու իրոք շնորքով մարդկանց»: Մի երկուսին ես էլ ճանաչում եմ, բայց ոչ մի վստահություն չկար, որ իրանք ում որ ուղարկում են՝ են ճիշտ մարդկանց են ուղարկում, ու ոչ մի վստահություն չկար, որ եթե ես, իմ ծանոթներից մեկը, ձեր սերնդից մեկը դիմի՝ ինքը կանցնի կամ չի անցնի ըստ օբյեկտիվ չափանիշների: Կարող է՝ ամեն ինչ լավ էր եղել, բայց վստահությունն էր բացակայում: Հիմա դա պիտի փոխի:

Հա ջա՞ն:

15:58 **Դահլիճ** – Իսկ հիմա չկա էդ հիմնադրամը:

ԳՏԳ – Հա ջա՞ն:

Դահլիճ – Հիմա էլ չկա էդ հիմնադրամը:

ԳՏԳ – Չէ, էդ հիմնադրամը, ինձ թվում է, «Լույս»-ը՝ չկա, բայց կլինեն այլ հիմնադրամներ, և այլն:

Եվ հիմա կգա, մեզ կմիանա էսօր-վաղը... էսօր թե վաղը՝ կրթության փոխնախարարը՝ իրա հետ կարող եք քննարկել, թե դա ինչպե՞ս է լինելու: Եվ այլ մեր նոր պետության նոր գործիչներ:

Երևի դուք ծանոթ չեք... Չգիտեմ, դուք ծանոթ թեք, երեկ օրակարգին ծանոթացրե՞լ են ձեզ:

Դահլիճ – Այո՛:

ԳՏԳ – Ուրեմն՝ կգան այդ գործիչները՝ կարող եք նրանց հետ քննարկել:

Բայց էդ վստահությունը շատ կարևոր է:

Ես հիշում եմ՝ դեռ տասը տարի առաջ՝ ես նոր էի դարձել այս հիմնադրամի տնօրենը. մենք լուսանկարչության մրցույթ էինք անցկացնում, և որոշեցինք ինչ-որ սիմվոլիկ բաներ տալ՝ նվերներ տալ հաղթողներին, և տվեցինք. առաջին տեղ՝ լավագույն լուսանկարի համար, երկրորդ տեղ, երրորդ տեղ:

Եվ երկրորդ տեղ ստացած աղջնակը մեկ էլ իր պատասխան խոսքում մոտենում է միկրոֆոնին և ասում է. «Գիտե՞ք, ես կյանքում չէի հավատում, որ կարելի է մասնակցել մրցույթի առանց ծանոթի և արժանանալ գնահատանքի. որ այդպես լինում է, որ անկախ ժյուրին հավաքվում է և հանկարծ, առանց ոչ մի ծանոթ խաղացնելու՝ քեզ քո աշխատանքի համար նվեր է տալիս»:

Ես շատ, իհարկե, տխրեցի ու հուզվեցի, բայց դուք կարող եք պատկերացնել, թե դա ինչքա՛ն տարածված է ամեն ասպարեզում՝ սկսած էն բոլոր դեպքերից, որոնք մենք հիմա տեսնում ենք մեր մեդիայում՝ տհաճ, մեծ, մասշտաբային չարաշահումների, վերջացրած՝ փոքր, մեր մշակույթի ներսում, խորքում եղող դեպքերի:

Երբ, ասենք թե, ինչ-որ մարդը հին տունը քանդել է. փայտե ինչ-որ տնակ ուներ՝ քանդել է, նոր տուն է սարքում: Եվ հարևանը գալիս է, ասում է. «Էս փայտը, որ քո մոտ դիզված է, քեզ պե՞տք է»: Ասում է. «Չէ, կարող ես տանել». հարևանը սկսում է էդ փայտը տանել: Մեկ էլ ես տանտերը տեսնում է, որ հարևանը եկել է՝ նոր տան էն որ սարքում են՝ «песа» (փայտամած), որ ռուսերեն

կոչվում է, եղ փայտյա եղ շինությունների փայտերն է պոկում: Ասում է. «Բայց ինչի՞ ես պոկում: Էստեղ մարդ պիտի գա՝ բանվորը գա, կանգնի, աշխատի»: Ասում է. «Դու ասեցիր, որ փայտը կարող եմ տանել, չէ՞»: Հասկանո՞ւմ եք: Ուրեմն՝ եղ մարդը, եղ հարևանը իրա հոգեբանությամբ՝ ձև է գտնում, որ ինչ-որ սխալ արարք կատարի, որը նման է գողության (եթե տանտերը չտեսներ՝ նա եղ փայտը պոկելու-տանելու է)... Հակատրամաբանական ձև է գտնում... (Մուտի ինքնարդարացում...) Հասկանալի է, չէ՞, դա ոնց է լինում:

Էղ սա՛ղ դեպքերի քանակը մեր մշակույթը աղավաղում է. և մենք հիմա՝ նոր ժամանակներում, պիտի փորձենք եղ մշակույթը ճիշտ ուղու վրա դնել:

Էստեղ երևի ես եղ հեղափոխության հետ կապված մասը ավարտեմ: Սա ձայնագրո՞ւմ եք, ժողովուրդ:

19:49 **Դահլիճ** – Այո:

ԳՏԳ – Եվ անցնենք... Հա ջա՞ն:

19:53 **Դահլիճ** – Ուզում էիք ջնջե՞լ:

ԳՏԳ – Չէ, ի՞նչ ջնջելու բան: Հիմա նույնիսկ ջնջելը... Կարելի է ջջնջել, երբ որ ամենախիզա՛խ բանն էս ասում: Էղ առաջ էր, որ ինչ-որ բան էն չէիր ասում՝ ասում էիր. «Եկեք սա մեր մեջ մնա»:

Հիմա անցնենք բուն գործին:

Էն, որ ես ձեզ ասեցի եղ բանի մասին՝ էսպես ասած, մրցույթը, արդար մրցույթի մասին, վերաբերվում է նաև մեր միջոցառմանը: Դուք էստեղ եկել եք մասնակցելու արդար մրցույթի: Սա լինելու է շատ մրցույթային մթնոլորտ: Դա չի նշանակում, որ պիտի ներս քաշվեք ու հաճույք չստանաք: Բայց լինելու են հաղթողներ և լինելու են մնացածները, որոնց մենք կգնահատենք ամեն՝ն դեպքում. թիմեր են լինելու հաղթողներ:

Եվ եղ մրցույթը տեղի է ունենում մի հարցի շուրջ, որը կոչվում է ինովացիա՝ նորարարություն³: Եվ մենք հիմա պիտի ձեզ հետ մի քիչ քննարկենք, թե ի՞նչ բան է նորարարությունը:

Դիմողները ես ծրագրի... Չգիտեմ, ձեր մեջ եղել են եղպիսի մարդիկ, թե ոչ, բայց շատ դիմողներ, կամ շատ կարծիքներ, որոնք ֆեյսբուքում էին հնչում՝ ասում էին. «Արա, էս ի՞նչ են մեզանից հարցնում. «թիթեռ և սահմանադրություն»... Էղ ի՞նչ ապուշությունն ա»: Գրում է, ասում է. «Եթե ձեր կարծիքով թիթեռն ու սահմանադրությունը համադրելով է մարդու որակը որոշվում, ապա դուք դեբիլ եք»: Երրորդը գրում է... և այլն, և այլն:

Ես էսօր մի քանի օրինակ պիտի բերեմ Ստրուգացկի եղբայրների ստեղծագործությունից: Ուրեմն, դրանք ֆանտաստներ էին վաթսուն-յոթանասունական թվականների, որոնք հոյակապ մի շարք գործեր են գրել, և եղ գործերից մեկում էսպիսի մի էպիզոդ կա, որ՝ էքսպերիմենտ են անում մարդկանց վրա: Մի հանգստավայրում, ինչպես, օրինակ, էս, երևում են ինչ-որ շատ տարօրինակ արարածներ, որպիսին ոչ ոք երբևէ չի տեսնի: Էղ հանգստավայրի ժողովուրդը եղ արարածների տեսքից վախենում է, զզվում է ու թողնում, փախնում է: Հետո գալիս է հետազոտողը, որ ուզում է

³ Ինովացիա և ստեղծագործական մտածողություն (Jam Session 7). <http://am.epfarmeria.am/innovation-creative-thinking/>

հասկանալ՝ ի՞նչ է կատարվել, և իմանում է, որ բոլորը փախել են բացի երկու հոգուց. մեկը մի տարեց կին՝ պարուհի, և մեկը մի տասներկու տարեկան տղա: Եվ երբ նա սկսում է նրանց հարց ու փորձ անել՝ պարզվում է, որ մնացածը, ով որ փախել է՝ բոլորը փախել են վախից, որովհետև նրանք այդ արարածներից վախ են միշտ զգացել՝ օտարություն և վախ:

Իսկ այդ կինը զգացել է, որ այդ արարածները մեղք են. նրանց պետք է սիրել՝ նրանք սիրո կարոտ ունեն: Եվ այդ տղան զգացել է, որ այդ արարածները շուտով մահանալու են. իրենց պետք է ինչ-որ կերպ փրկել: Եվ դրա համար նրանք չեն փախել: Եվ հետո, ուրեմն, ի՞նչն է սրա. . . Առակս ի՞նչ կցուցանե. որ դա կոչվում է **Ռեակցիաների դիսպերսիա**:

Երբ դու օտարից վախենում ես, երբ դու օտարից խորշում ես, երբ դու օտարից հետ ես քաշվում, վերսուս՝ երբ դու ա՛յլ բաների վրա ես ուշադրություն դարձնում, իսկ, այ, քո բնական զգացմունքը օտարությունի՛ չես վերցնում որպես գլխավոր մոտիվ քո գործունեության համար:

Ռեակցիաների դիսպերսիա: Էդպիսի էքսպերիմենտներ Ստրուգակիների մոտ շատ կային:

Եվ, ի վերջո, նորարարականը միշտ կապված է մի էդպիսի բանի հետ: Եվ **կան մարդիկ, որոնք չեն վախենում, չեն զարմանում, չեն խորշում օտարից:**

Ձեզ շատ դժվար աշխատանք է սպասվում նաև ինչու՞. որովհետև, ի տարբերություն մեր նախորդ «Մարդամեջ»-երի՝ մենք այս անգամ չունենք նախապատրաստված գաղափարներ: Դու՛ք չունեք: Մենք հավաքագրել ենք ձեզ առանց նախապատրաստված գաղափարների: Իսկ դա ի՞նչ է նշանակում: Դա նշանակում է, որ այն գաղափարները, որոնք այստեղ կծնվեն՝ նրանք կծնվեն այստեղ և հիմա: Նրանց շուրջ կհավաքվեն թիմեր՝ և հեջ պարտադիր չի, որ նրանք լինեն նույն տեղանքի մարդիկ: Եվ էս թիմերը պիտի աշխատեն էս գաղափարի շուրջ: Եվ եթե ինքը շահեց՝ իրենք պիտի հանձն առնեն իրագործել: Այսինքն՝ շատ կարճ ժամանակում՝ մեկ ու կես օրվա ընթացքում, էս թիմը պիտի էնքան սեր զգա դեպի էդ գաղափարը, էնքան հավատա ինքն իր ստեղծած, զարգացրած գաղափարին՝ որ հետո հանձն առնի իրագործել:

Որովհետև շատ տխուր կլինի, եթե մրցույթում հաղթեն և հետո չիրագործեն կամ չկարողանան իրագործել: Իհարկե, մեր թիմերը կօգնեն իրագործման ժամանակ, բայց մեկ է. պետք է այդ **մոտիվացիան. որ հենց հիմա ծնվածի շուրջ մենք դրան նվիրվելու ենք:**

Դա էլ ևս մի մարտահրավեր է: Որովհետև մարդ սովորաբար սիրում է իր ներքին խորքում գտնվող գաղափարը, որ նա տարիներ շարունակ զարգացրել է, սիրել է և այլն:

Էնպես որ շատ հետաքրքիր պրոցես է լինելու:

Ինչ վերաբերում է նորարարության մյուս, էսպես ասած, հանգամանքներին:

Ո՞վ է հայտնագործել աթոռը: Ո՞վ կարող է ասել:

26:18 **Դահլիճ** – Մարքսը:

ԳՏԳ – Մարքսը՝ Հը՞:

Դահլիճ – Մարդը:

ԳՏԳ – Մարդը: Ես կարծեցի Մարքսը, կամ Էյնշտեյնը, կամ եսիմ ով: Ո՞վ է հայտնագործել այս հետաքրքիր առարկան (աթոռ): Հիմա տեսեք. ուրեմն՝ **կա մեր շուրջ գտնվող հազար ու մի ստեղծագործության արդյունք, որի հայտնագործողը հայտնի չէ**: Ասենք՝ մենք գիտենք, որ, չգիտեմ, այս լամպը... Էն էլ այս չէ՝ նախորդ տեսակը լամպը հայտնագործել է Էդիսոնը. Էն էլ Ռուսաստանում դա հարցի տակ են դնում, ասում են՝ մի երկու ժամ Էդիսոնից շուտ մեր ռուս հայտնագործողն է հայտնագործել: Բայց մեծ մասը հայտնագործությունների՝ անուն չունի: Մենք ասելով ստեղծագործություն՝ սովորաբար խառնում ենք, տեսնում ենք արվեստի ստեղծագործությունը, որը հեղինակային է: Մեզ թվում է, թե... Բայց տեսեք՝ նույնիսկ արվեստի դեպքում. նայեք որևէ կինոնկար և նրա վերջում եկող տիտրերը: Դուք տեսնում եք՝ ի՞նչ հսկայական քանակությամբ անուններ են էնտեղ արտացոլվում. Է՛լ լուսավորիչ, Է՛լ ներկերը բերողը, Է՛լ չգիտեմ՝ սուրճ մատուցողը. բոլորը, բոլորը գրվում են որպես համահեղինակներ էդ ֆիլմի: Եվ երբ էդ ֆիլմը ունենում է մի ռեժիսոր, որը շատ հայտնի է, կամ մի դերասան, որը շատ հայտնի է՝ նրա շուրջ է էդ ամբողջ համահեղինակությունը: Նա փաստորեն ավելի շուտ բանն է՝ սիմվոլն է, քան միայն հեղինակը:

Հիմա կասեք. «Բայց գիրքը մի հոգի է գրում»: Բայց էդպես չէ, որովհետև հիմա արդեն դառնում է ավանդույթ, և, իմիջայրոց, էլի դա արևմուտքից եկող ավանդույթ է՝ մեզանում այդքան չկա. շատ մե՛ծ շնորհակալանքի էջեր գրել. թե ո՞վ է մասնակցել, ո՞վ է օգնել տվյալ գրքի կառուցմանը, կազմմանը: Անուններ անունների ետևից. իմ մայրը, իմ կինը, իմ երեխաները, իմ թարգմանիչը, իմ խմբագիրը, իմ առաջին ընթերցողը, իմ այսինչ տվյալները տվողը՝ բոլորի անունները գրվում են տարբեր շնորհակալանքներով: Այսինքն՝ այն, որ... Էլ չեմ ասում՝ ասենք, չգիտեմ, համերգը կամ բալետը և այլն:

Այն, որ ստեղծագործությունը կոլեկտիվ գործողություն է (ուրիշ բան, որ կարող է ունենալ առաջնորդ) դա ամեն տեղ է արտահայտվում: Իսկ եթե կոլեկտիվ գործողություն է՝ նույնիսկ առաջնորդի անունը կարող է չմնալ, ինչպես, ասենք, աթոռը ստեղծողի անունը: Գուցե չի էլ եղել, որովհետև **կա ևս մի հետաքրքիր հասկանիշ. որ լավ ստեղծագործությունները միաժամանակ մի քանի տեղ են ստեղծվել**:

Ես համոզված եմ, որ հիմա աշխարհի մի կետում կա մի այսպիսի խումբ՝ չգիտեմ, չինացիների, ամերիկացիների, աֆրիկացիների, որոնք հիմա անելու են նորարարական ճամբար, և որոնց գաղափարները կարող է շատ կամուրջներ ունենան այստեղ ծնվելիք գաղափարների հետ:

Լավ ստեղծագործությունը չի ունենում մի հեղինակ: Նույնիսկ եթե վերցնում ենք Շեքսպիրին. Շեքսպիրի պիեսները հայտնի՝ «Համլետ»-ը, «Ռոմեո և Ջուլիետ»-ը, «Օթելլո»-ն, գոյություն ունեցող մի շարք անգամ գրված տարբեր պիեսների մողիֆիկացիաներ են: Եղա՞վ:

Ուրեմն՝ մի՛ խորշեք դրանից, մի՛ սպասեք, որ կլինի հեղինակային իրավունքը այս խաղի ընթացքում: Դուք բոլորդ՝ ամեն մեկդ հեղինակ եք, ձեր խմբերն են, ձեր թիմերն են հեղինակային, ո՛չ թե անձերը: Այս խաղի մեջ, այս միջոցառման մեջ հեղինակային իրավունք չի լինում: Եվ ես իզուր չեմ ասում խաղ, որովհետև ստեղծագործությունը, չնայած մենք իրականում խաղ էլ ենք անելու, բայց **ընդհանրապես ստեղծագործությունը շատ առնչված է խաղի հետ՝ խաղալու, ուրախանալու, հրճվելու, «հենց նենց տեղը» բան անելու, ազատ վարվելու**:

Մտրուգացկիներից ևս մի օրինակ ասեմ ուրեմն. ասում է էդ՝ կա մի գիտնական կին, որը շատ հետաքրքիր հասկանիշ ունի: Ասենք թե նա ֆիզիկոս է և աշխատում է որոշակի ֆիզիկայի

պրոբլեմի վրա, որը անլուծելի է: Երկա՛ր ժամանակ նա աշխատում է, երկա՛ր տարիներ նա աշխատում է էս պրոբլեմի վրա ու ոչ մի կերպ չի ստացվում, որ նա լուծի: Սակայն ինչ-որ մի պահի, երբ նա սրա վրա աշխատելուց անջատվում է և գնում է նավակով լողալու երկու օրով՝ ի՞նչ է տեղի ունենում: Նա հանկարծ լուծում է մի լրիվ ուրիշ խնդիր, որի մասին միայն լսել է, որով երբեք մասնագիտորեն չի զբաղվել. լուծում է հայտնագործության աստիճանի, այսինքն գտնում է ինչ-որ շատ կարևոր գիտական խնդրի լուծման ձև: Տեսե՛ք՝ ի՛նչ հետաքրքիր անցում է էստեղ՝ շա՛տ մտածելու տեղիք տվող:

Մյուսը՝ ֆանտաստիկ թե կիսաֆանտաստիկ: Երբ նրանք դա գրում էին՝ դա ֆանտաստիկ էր: Հիմա դա հայտնի փաստ է: Ասում է. «Շատ կարևոր է հղի կանանց մասնակցությունը ստեղծագործական պրոցեսներին, որովհետև հղի կինը երկու էակ է, երկու անձ է: Նա իր և իր երեխայի հետ հարաբերությունների միասնություն է, որոնք գտնվում են հոգեբանամտավոր շատ հետաքրքիր կապի մեջ»: Եվ հիմա մենք շատ բան ենք իմանում այն մասին, թե ինչպե՞ս է Էմբրիոնի, հա՛, հոգեբանությունը կապվում կնոջ, մոր հոգեբանության հետ:

33:27 **Դահլիճ 1** – Gevorg, obviously you haven't been pregnant (laughing).

33:41 **ԳՏԳ** – Well, obviously I have not been pregnant.

Դահլիճ 2 – Nothing is obvious in this life.

ԳՏԳ – Ուրեմն ժողովուրդ ջան՝ մեկ այլ բան. **ստեղծագործությունը պահանջում է շատ ուժեղ կարողություն անջատվելու մնացած ամեն ինչից, անջատվելու կոնտեքստից:** Ճիշտ ինչպես էն դեպքում, որ ասում էի՝ ինքը ուրիշ բանի լուծումն է գտնում, - ճիշտ ինչպես էն դեպքում, որ ասում էի՝ որ էստեղ չկա հեղինակային իրավունք, որ քո սիրելի գաղափարը չի լինելու դա, այլ մեկ այլ բան... - նույն կերպ, հենց սկզբից մտածելիս, թե ինչպե՞ս կառուցել, ի՞նչ գաղափար գտնել, պետք է աշխատել դուրս գալ սեփական կոնտեքստից: Ինչո՞ւ: Տեսե՛ք, սա էլ մեղիտացիայի ուսմունքների հետ է կապված: Եթե որևէ մեկը զբաղվել է մեղիտացիայով՝ էնտեղ կա էսպիսի մի մեթոդ: Ասում է. «Պիտի աչքերդ փակես, լուրջան մեջ լինես և աշխատես բոլոր մտքերդ գլխիցդ մաքրել»: Եվ մեկ ամս մեկ հենց որ միտք է առաջանում՝ չրթում, դեն ես նետում, մինչև գլուխդ դատարկվի, մինչև կարողանաս հասնել այն վիճակին, երբ ոչ մի միտք մտքովդ չի անցնում: Եվ ինչ որ կմնա դրանից հետո՝ դա է. - ասում է մեղիտացիոն հիմունքներից մեկը: Ուրեմն՝ այ դա կոնտեքստից հրաժարվելու (ձև է)...

Մենք բոլորս շատ ուժեղ կոնտեքստի մեջ ենք ընդգրկված: Ու մեզ դժվար է, ինչպես, ասենք, արմատ... ծաղիկը եթե որ քաշես հողից՝ ինքը արմատը հետը գալիս է, վրեն հող է կպած, և այլն. դժվար է կոնտեքստներից անջատվել, և ի վերջո անհնարին էլ է մինչև վերջ անջատվել, որովհետև ամեն ինչ ունի իր կոնտեքստը: Բայց հարաբերականորեն գոնե որքան կարելի է կապերից հրաժարվել՝ շատ բարվոք է ստեղծագործական իրադրություն ստեղծելու համար: Եվ ուզում էի ասել, որ **փայլունը, խաղը, ուրախանալը, քեֆ անելը, ստեղծագործելը որպեսզի արդյունքի բերի, որպեսզի գաղափարը դառնա ծրագիր և իրագործելի և հետո իրագործվի՝ պետք է հսկայական աշխատանք թափել:**

Ուրեմն. **մի կողմից՝ դա խաղ է, մյուս կողմից՝ տաժանակիր աշխատանք, եթե ուզում ես, որ արդյունքի հասնես. մի պահ խաղ է, մնացած ամբողջ ժամանակը տաժանակիր աշխատանք:**

Ուրեմն. մենք պիտի պատրաստ լինենք լավ աշխատելու: Եվ պիտի ասեմ, որ էդ աշխատանքը իհարկե միայն ֆիզիկականը չի, միայն վազվզելը չի: Էդ աշխատանքը նաև էլի շատ ուժեղ կապված է մտավորի և հայտնագործության համար անհրաժեշտ հատկանիշների հետ: Օրինակ, երբ որ մենք գաղափարը մշակեցինք, հետո պիտի դրանից ծրագիր-պրոյեկտ ստեղծենք՝ **մենք պիտի երևակայենք էդ պրոյեկտը: Այդ երևակայելը, մեր ուղեղը օգտագործելը՝ ապագան կանխորոշելու համար, նույնպես շատ դժվար և շատ էներգատար աշխատանք է:** Այսինքն՝ լավ, նորարարական ծրագիրը, գաղափարը ստացվում է ծրագիր և իրագործելի, եթե երկու պահն էլ մեջը կան: **Ե՛վ խաղը, ազատությունը, պտոթկումը, և՛ նվիրումը երևակայելուց սկսած մինչև հետո իրագործման պահը՝ շա՛տ խոշոր, ռեսուրսատար, էներգատար գործունեություն է:**

Ի՞նչ մնաց, որ ես ձեզ ասեմ: Ինձ թվում է՝ ես հիմնականում ասացի: Եկեք հիմա դա անենք մի փոքր փորձի համար: Խնդրում եմ մի որևէ բան ասեք:

38:20 **Դահլիճ** – Կավիճ:

ԳՏԳ – Հա ջա՛ն: Կավիճ. շատ լավ: Ասեք մեկ ուրիշ բան:

38:30 **Դահլիճ** – Անտառ:

ԳՏԳ – Անտառ: Դե հիմա միավորեք էս երկու բառը իրար և որևէ ծրագրային գաղափար ստեղծեք:

38:40 **Դահլիճ** – Սպիտակ անտառ:

ԳՏԳ – Սպիտակ անտառի ծրագրային իմաստը ո՞րն է՝ նորարարական, հանրային հարցեր լուծող. կարո՞ղ եք բացատրել:

38:50 **Դահլիճ** – Թափանցիկ: Էկոլոգիապես մաքուր, գեղեցիկ

ԳՏԳ – Գեղեցիկ... Ստեղծվեց: Էստեղ կարող են շատ ինտերպրետացիաներ լինել:

39:02 **Դահլիճ** – Թափանցիկ կառավարում:

ԳՏԳ – Թափանցիկ կառավարում: Խնդրեմ.

Դահլիճ – Էկոճամբար:

ԳՏԳ – Էկոճամբար: Ինչպե՞ս է էկոճամբարը ելնում կավիճ և անտառ հասկացություններից:

39:17 **Դահլիճ** – Բնական է:

ԳՏԳ – Մի հատ էլ անենք: Ո՞վ կասի մեկ այլ բան:

Դահլիճ – Հյուսիս-հարավ:

39:26 **ԳՏԳ** – Հյուսիս-հարավ:

39:37 **Դահլիճ** – Լուսացույց:

ԳՏԳ – Հա ջա՛ն:

Դահլիճ 1 – Լուսացույց:

Դահլիճ 2 – Վարչապետ:

ԳՏԳ – Բարձր ասեք:

Դահլիճ – Լուսացույց, վարչապետ:

39:44 **ԳՏԳ** – Լուսացույցը ո՞րն ա:

Դահլիճ – «Светафор»:

ԳՏԳ – Լուսացույց: Մյուսը ասեց ի՞նչ՝ վարչապետ:

Դահլիճ 1 – Վարչապետ:

39:56 **Դահլիճ 2** – Օրինական վարչապետ:

ԳՏԳ – Օրինական վարչապետ:

Դահլիճ 1 – Կառավարություն:

Դահլիճ 2 – Վարչապետ, որը կանգնում ա լուսացույցի տակ:

ԳՏԳ – Հա ջա՞ն:

40:16 **Դահլիճ 1** – Ուրախ վարչապետ:

40:20 **Դահլիճ 2** – Հստակություն:

ԳՏԳ – Մի խոսքով. հասկանալի է, չէ՞: **Ազգային նպատակը ինչը՞ պիտի լինի. որ վարչապետը մեր գլխին լուսացույց շատ չդառնա, որ բանը՝ կամային կերպով չփոխի լույսերը, չէ՞, որ լույսերը՝ լուսացույցի լույսերը անկախ վարչապետից աշխատեն, մյուս կողմից՝ որ ինքը հետևի էդ լուսացույցի լույսերին նույնպես, ինչպես մենք բոլորս:** Լա՛վ: Մի հատ էլ անե՞նք փորձ:

40:59 **Միքայել Հովհաննիսյան (ՄՀ)** – Բայց ինչի՞ էք հաջորդ վարժությունը «spoil» անում:

41:03 **ԳՏԳ** – Վա՛յ: Ես «spoil» չեմ անում, ես գիտեի էդ պիտի անեմ, դրա համար եմ անում: Ժողովուրդ ջան, ես ավարտել եմ: Հա, մի բան էլ ասեմ. մի բան էլ ասեմ և ավարտեմ: Ուրեմն տեսեք. կան հասկացությունների կատեգորիաներ բնականաբար: Օրինակ՝ նախորդ դեպքում պատահական սկզբունքով երկու հասկացություն ընտրվեց: Մա՛ կոպիտ ասած... Շատ կոպիտ եմ ասում, որովհետև մարդկանց զգացողությունը կարող է տարբեր լինել: Մա (անտառը) մարդ արարածից ավելի հեռու հասկացություն է ինչ-որ իմաստով: Այսինքն մարդը լինե՞ր-չլինե՞ր՝ անտառը կլինե՞ր: Մա՛ մի կողմից այո, որովհետև կավիճը նյութ է, կիր է, չէ՞, բայց մյուս կողմից, երբ մենք ասում ենք «կավիճ»՝ արդեն հասկանում ենք մարդու կողմից, այո՛, մշակված նյութ: Զգո՞ւմ եք: Հիմա տեսե՞ք էստեղ. Մա (լուսացույց) տեխնիկական, շատ կարևոր, բայց տեխնիկական սարք է, և սա (վարչապետ) նույնպես շատ կարևոր, բայց մշակութային շա՛տ ծանր բեռ իր հետ ունեցող կառավարման հասկացություն է: Ես ձեր ուշադրությունն եմ դարձնում, որ, օրինակ, անգլերենում կամ ռուսերենում դա կոչվում է «премьер-министр» - «առաջին մինիստր»: Իսկ հայերենում, օրինակ, չկա: «Պրեզիդենտ» բառը կար՝ վերցրեցին, զցեցին մի կողմ, փոխարինեցին «նախագահով», որը

«председатель»-ն է: Եվ «մինիստր» բառը գցեցին մի կողմ, փոխարինեցին «նախարարով», որը տարածքային, որը «մարզպետն» է հին Հայաստանում, если уж на то пошло:

42:57 **ՄՀ** – Բայց էդքան էլ չէ:

ԳՏԳ – Ինչի՞ էդքան չէ:

ՄՀ – Ուրտային էր:

ԳՏԳ – Հա ջա՞ն:

ՄՀ – Ուրտային էր էն ժամանակ էդ թեման:

ԳՏԳ – Չէ, ինքը նախարար լինելով՝ էսինչ նախարարության ղեկավար, նաև դառնում էր սպարապետ, ասենք թե: Բայց ինքը...

ՄՀ – Բազրատունիները՝ իրենք նախարարի... Նախարարական տոհմեր էին:

ԳՏԳ – Նախարար... Նախարարը՝ դա տարածքային հասկացություն է՝ ֆունկցիոնալը նրա վրա դրվում է: Հիմա տեսեք. իսկ էս բառը գեղեցիկ՝ ինքը մեր սեփականն է – վարչապետ: Ինքը չունի անալոգներ ուրիշ լեզուներում: Մեր լեզվի, մեր մշակույթի, մեր քաղաքակրթության կողմից ստեղծված հասկացությունն է կառավարման համակարգի համար: Ես չեմ ասում՝ դա լավ է, դա վատ է...

43:50 **ՄՀ** – Ստեղ էլ ինովացիա կա: Ինչ-որ մեկը արագ ասել է վարչության պետ, դարձել է վարչապետ (ծիծաղ):

ԳՏԳ – Ուրեմն՝ իրանք ունեն տարբեր ստատուսներ: Եթե դու ուզում ես, էսպես ասած, հրաժարվել տեխնիկականից՝ դու չես օգտագործի տեխնիկականը: Եթե դու ուզում ես հրաժարվել, չգիտեմ, ինչ-որ կառավարական համակարգերից՝ դու էս բառի փոխարեն կօգտագործեիր, ասենք, «իշխան» բառը, որը էլի ինչ-որ իշխանի դեր էր նշանակում, բայց չի ասում, թե նա վարչապետ է, թե նախարար է, թե էս է, թե էն է. օրինակի համար: Կամ «իշխ» բառը էս սիրում եմ ասել: Ուրեմն՝ բառերը ունեն իրենց... Եվ հասկացությունները ունեն իրենց ծանրաբեռնվածությունը. տարբեր ծանրաբեռնվածությունները: Դա կարելի է հաշվի առնել, կարելի է հաշվի չառնել: Բայց երբ մենք մտածում ենք, թե ինչ հասկացություններ ենք ուզում խաչաձևել՝ դա էլ կարևոր հանգամանք է:

Հիմա. իհարկե դուք լսել եք արդեն, - և էս վարժությունն էլ արել եք և հիմա էսօր էլ ենք անելու և այլն, - որ էս ասել եմ, ու դա հայտնի փաստ է, որ **առաջին, նախնական ստեղծագործական քայլը դա երկու իրարից անկախ հասկացությունների դուրս բերելն է**⁴: Տեսեք, երբ մենք դուրս էինք բերում՝ մեկը ասաց սա (լուսացույց), մյուսը ասաց սա (վարչապետ): Ոչ պայմանավորվել էիք, որ... Կոնտեքստից դուրս եկավ: Էս երկուսի ասվելը մեկ կոնտեքստի մեջ մենք հետո դրեցինք, բայց իրանք երկու տարբեր կոնտեքստներից էին գալիս: Ուրեմն՝ երկու հասկացություն. իհարկե դա մինիմումն է: Երկու տարբեր հասկացություն ի մի բերելը դա, էսպես ասած, մոդելն է. ստեղծագործական քայլ է, բայց կարևոր մոդել է: Իրականում ի մի են բերվում բազում տարբեր հասկացություններ և երևույթներ: Բայց եթե մենք երկուսը աչքի առաջ ունենք՝ դա լավ մոդել է:

⁴ Ինովացիա և ստեղծագործական մտածողություն (Jam Session 7). <http://am.epfarmeria.am/innovation-creative-thinking/>

Եվ մյուսը. իսկ ինչքանով է այդ ստեղծագործականությունը արժեքավոր: Էստեղ կա էսպիսի էլի հիպոթեզ. ինքը հարյուր տոկոսանոց չի, որովհետև դա մեկնաբանության հարց է: Բայց ասում է. ինչքան իրարից հեռու եղան երկու հասկացությունները իմաստային առումով (և պետք է հասկանալ, թե էդ «հեռուն» ի՞նչ է նշանակում), ինչքան նրանց միջև մեր կողմից զգացվող տարածությունը մեծ է, եթե մենք դա կարողացանք ի մի բերել և դրանից մի գաղափար, մի ծրագիր դուրս հանել՝ ապա դա ավելի արժեքավոր է, քան իրար մոտ կանգնած հասկացությունները: Կարո՞ղ եք էդպիսի օրինակ բերել:

46:53 **Դահլիճ** – Օրինակ՝ թիթեռ-սահմանադրությունը:

ԳՏԳ – Ի դեպ՝ սահմանադրությունը բավական հեռու է, չէ՞, բնականաբար (թիթեռից). ինձ թվում է՝ հասկանալի է: Ուրի՞շ: Օրինակ՝ իմ կարծիքով «լուսացույց» ու «վարչապետ» իրար ավելի մոտիկ են, որովհետև սա էլ է «ռեզուլիտովկա» անում, սա էլ, ու երկուսի մեջ էլ ինչ-որ տեխնիկական բան կա: Իսկ, ասենք, «կավիճ» ու «անտառ» մի քիչ ավելի իրարից հեռու են: Տեսեք, սա կոչվում է... **էդ բանի շուրջ եղած հասկացությունների բոլոր հնարավոր մեկնաբանությունների քանակը կարելի է անվանել նրա «թեզաուրուս»**⁵: Ուրեմն՝ էդ թեզաուրուսը ինքը շատ հետաքրքիր բան է: Բայց խնդիրը էն է, որ եթե իրանք իրարից հեռու եղան՝ որ թեզաուրուսները իրար հետ գրեթե չեն խաչվում, և հետո դու բերեցիր և թեզաուրուսները խաչեցիր, դու՛ միավորեցիր՝ ա՛յ, դա՛, դրա՛ մեջ կա ստեղծագործական լիցք:

Օրինակ՝ էլի եմ ասում. երբ ես ասում եմ. «Նրանց մեջ կա ռեզուլյատիվ էլեմենտ»՝ ես ասացի. սրանց (լուսացույցների) թեզաուրուսի մեջ էլ կա բան՝ կանոնակարգող, ռեզուլյատիվ էլեմենտ, սրա (վարչապետի) թեզաուրուսի մեջ էլ», չէ՞: Էդ իրանց ընդհանրությունը եղավ: Տեսեք, էս դեպքում ինչ հետաքրքիր ստացվեց, երբ ասվեց «սպիտակ անտառ»-ը որպես մաքրության, մաքուր անտառի՝ էկոլոգիապես մաքուր անտառի դեպք: Կավիճը որպես սպիտակ՝ սա արդեն մեկնաբանությունների և փոխաբերությունների շարք կազմվեց. «կավիճ, սպիտակ, մաքուր»... Հասկանալի է: Եվ էդ մաքուրը արդեն հեշտությամբ էր կապում սրան (անտառին), որովհետև եթե պարզապես «սպիտակ անտառ» է՝ ես սկզբից կարծեցի կեչուստի մասին է խոսքը գնալու: Կամ հա՛՛ ձյան տակ եղած:

Հա ջա՞ն:

48:47 **Դահլիճ** – «Եբեձա»-ն ա:

ԳՏԳ – Դե կեչուստը... Կեչին «Եբեձա»-ն չի՞: Հա: Մի հատ եկեք այ, է՛ս հեռավորության վերաբերյալ մի հատ էլ փորձ անենք՝ և մոտենանք ավարտին: Ո՞վ կուզի ասել. ասեք մի հասկացություն:

49:04 **Դահլիճ** – Ծամոն:

ԳՏԳ – Ծամոն:

Դահլիճ 1 – Տիեզերք:

Դահլիճ 2 – Դատավոր:

⁵ Կոնստեքստի ընդլայնում. Գևորգ Տեր-Գաբրիելյան (Jam Session 38).
http://am.epfarmeria.am/context_expansion/

ԳՏԳ – Ծամոն, տիեզերք: Կարող է մի հատից ավել լինել. դատավոր: Ես հիմա... Հա՛: Ես հիմա ուզում եմ դուք իրենց թեզաուրուսների սահմանների մասին խոսեք, ոչ թե իրար միավորեք, որ Միքայելը չասի. «Հաջորդ վարժությունն էս անում»: Պարզապես եկեք իրենց թեզաուրուսների սահմանների վերաբերյալ խոսենք: Օրինակ՝ ի՞նչ չափով ծամոնի թեզաուրուսը դուք կարող եք ընդլայնել էնպես, որ կապվի տիեզերքին: Խնդրեմ.

49:39 **Դահլիճ** – Թեզաուրուսը կասե՞ք ինչ է:

ԳՏԳ – Թեզաուրուսը դա էն բոլոր հնարավոր հասկացություններն ու մեկնաբանություններն են, որոնք էս հիմնային հասկացության հետ կապվում են: «Աուրա» բառից է՝ աուրա կա ամեն բառի շուրջ, ամեն մարդու շուրջ, ամեն ինչի շուրջ: Ասենք լուսացույցի դեպքում, ասում եմ, էդ կանոնակարգման սկզբունքը թեզաուրուսի մեջ է մտնում: Կարմիր, կապույտ... Կարմիր, կանաչ, դեղինը նույնպես: Սպիտակի... Կավիճի դեպքում սպիտակը և բանը՝ մաքուրը մտնում են իր թեզաուրուսի մեջ:

50:20 **ՄՀ** – Թեզաուրուսը շարունակական ընդլայնման հնարավորություն է տալիս:

ԳՏԳ – Դե բա մենք էլ հենց էդ էնք անում, որ միավորումը ստեղծում ենք՝ ընդլայնում ենք:

50:27 **ՄՀ** – Ես նկատի ունեմ՝ կավիճից որ դու սպիտակ ես բերում, սպիտակից բերում ես մաքուրը... Չե՞, մաքուրը: Կավիճն ու մաքուրը էդքանով միջնորդավորված կապվում են իրար սպիտակի միջոցով:

50:40 **ԳՏԳ** – Կավիճն ու մաքուրը...

ՄՀ – Այսինքն՝ կավիճն ու մաքուրը իրար հետ անմիջական կապ չունեն, բայց սպիտակի միջոցով փոխկապակցվում են:

50:46 **ԳՏԳ** – Էդ եմ ասում:

ՄՀ – Ու տենց հա՛ կարող ես մինչև հասնես աշխարհի ծերը:

50:50 **ԳՏԳ** – Հա, բայց ինչո՞ւ մաքուրը ծնվեց. որովհետև պետք էր կապել անտառի հետ: Այսինքն՝ նպատակը կանխորոշեց թեզաուրուսի կապի ձևը: Լավ, ասեք. ծամոնը ինչպե՞ս կկապեք տիեզերքի կամ դատավորի հետ:

51:06 **Դահլիճ** – Ծամոն, երևի ազատություն:

51:13 **ԳՏԳ** – Ձեռք բարձրացրեք, որ իրար լսենք. ազատություն... հանգիստ:

51:16 **Դահլիճ** – Ծամոնը ինչքան ծամում ես՝ ծամվում է. այսինքն՝ անվերջ կարաս ծամես:

51:20 **ԳՏԳ** – Ինչպես և տիեզերքը:

51:26 **Դահլիճ** – Տիեզերք թռնելու համար թթվածին է, չե՞, հարկավոր, ծամոնն էլ ունի համ: Թթվածինը որոշ ժամանակ կբավականացնի իջնել ներքև, ծամոնն էլ...

51:37 **ԳՏԳ** – Թթվածինը կբավականացնի՝ կիջնեն ներքև: Իսկ ծամո՞նը...

51:40 **Դահլիճ** – Համը կանցնի:

ԳՏԳ – Համը կանցնի, ճիշտ է: Ամեն ինչ վերջավոր է եղ առումով:

Դահլիճ – Բացի դատավորից:

ԳՏԳ – Դատավորի հետ ի՞նչ է կապված, ո՞վ է ուզում ասել:

51:53 **Դահլիճ** – Տիեզերքի նման անվերջ է ծամոն որոճացող դատավորը (ծիծաղ):

52:08 **ԳՏԳ** – Ուրեմն՝ ինչքան իրարից հեռու և հետո կապում ենք իրար՝ էնքան հետաքրքիր: Եվ իրոք... Ե՛վ ծամոնն ու տիեզերքը, և՛ տիեզերքն ու դատավորը, և՛ ծամոնն ու դատավորը իրարից բավական հեռու բառեր են: Բայց պետք է հաշվի առնել, որ մենք մենակ գոյականների մասին չենք խոսում, չէ՞: Մենք նաև կարող ենք, ասենք, դնել բան, չգիտեմ, «կարմիր» և «կոկորդիլոս», ինչպես ես մի անգամ արեցի կյանքում: Հա՛:

Ուրեմն՝ վերջին բանը ժողովուրդ ջան. էս, որ մենք հիմա խոսում ենք՝ սա գիտելիքի, մտածողության, էրուդիցիայի հետ կապված բան է: Այսինքն, եթե դու ուզում ես իրարից հեռու երկու գաղափար վերցնես՝ դու պիտի գոռ տաս ուղեղիդ: Դա ռեֆլեքսիայի կարիք ունեցող իրադրություն է: Իսկ ստեղծագործականության էն առաջին փուլը՝ էն բլթբլթացողը, ինքը պարտադիր չի հեչ, որ ռեֆլեքսիայի հետ կապված լինի, որ էդ ուղեղի, էդ ծանրաբեռնման հետ կապված լինի: Հետո պետք է գալու, երբ արդեն դա տեղի ունեցավ. բայց սկզբից կարելի է ազատ լինել: Այսինքն՝ ես ձեզ որոշակի ուղենիշներ էի տալիս, ինչպես ասում է չինական ասացվածքը հետևյալ խորհրդով: Ասում է. **«Եթե ուզում ես ստեղծել բամբուկ՝ իմացիր ամեն ինչ բամբուկի մասին, հետազոտիր բամբուկը ծայրեիծայր, և մոռացիր ամեն ինչ բամբուկի մասին, և հետո ստեղծիր բամբուկ»:**

Շնորհակալություն:

«Մարդամեջ» սոցիալ-նորարարության հավաքն իրականացվում է «Մեդիան քաղաքացիների տեղեկացված մասնակցության համար» ծրագրի շրջանակում: Ծրագիրը համատեղ իրականացնում են Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը, Եվրասիա համագործակցություն հիմնադրամը և Ինտերնյուսը ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ:

Մղազրությունը՝ Տաթևիկ Ղահրամանյանի

Մղազրության ավարտը՝ հուլիսի 11, 2018թ.

Խմբագրության ավարտը՝ օգոստոսի 20, 2018թ.

Խմբագիր՝ Անի Թովմասյան